# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱԲԻԹԱԹԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Սեպտեմբերի 18-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ «Միջազգային Հաբիթաթ փոր Հյումենիթի» կազմակերպության փնօրենների միջազգային խորհրդի նախագահ Քեն Քլեյնի գլխավորած պատվիրակության հետ:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակություն հայտնեց, որ «Հաբիթաթը» շարունակում է իր առաքելությունը Հայաստանում կարիքավոր հայորդիների կյանքի բարվոքման համար: Այս առիթով Նորին Սրբությունը իր գնահատանքն ու օրհնությունը բերեց կազմակերպությանը՝ մաղթելով, որ Աստված «Հաբիթաթի» մարդասիրական ծառայությունն արգասավորի գեղեցիկ իրագործումներով:

Իր հերթին պրն. Քեն Քլեյնը շնորհակալություն հայտնեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Նորին Սրբության զորակցության և ծրագրին բերած մասնակցության համար:

Հանդիպմանը ներկա էին ԱՄՆ Հայոց Արևելյան թեմի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը և Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ԼՂՀ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրվա առիթով շնորհավորական ուղերձ է հղել ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանին:

Շնորհավորագրում մասնավորապես ասվում է. «Ուրախություն է մեզ համար, որ այսօր Արցախի հայրենասեր ժողովուրդը, արժևորելով իր հերոսական պայքարի շնորհիվ ձեռք բերված անկախությունը, ստեղծագործ աշխատանքով և արի կամքով շարունակում է Հայրենի երկրի բարեշեն և ազատ կյանքի կառուցումը՝ հաղթահարելով նոր ժամանակների մարտահրավերները և հաստատելով իր ընթացքը ժողովրդավարական արժեքների մեջ, որոնք ապահով կյանքի նոր հորիզոններ են բացում մեր զավակների համար:

Աղոթում ենք առ Բարձրյալն Աստված, որ Իր երկնառաք օրհնությամբ անվրդով խաղաղության ու առաջընթացի մեջ պահի Արցախ աշխարհը՝ պարգևելով մեր բարեպաշտ